Ա. Խաչատուրեանի՝ «Սիսպիրիտիս երկրի մէջ Կարալլայի մօտ գըտնըւում էին ոսկեհանքեր, ուր Ալեքսանդր ուղարկեց Մեմնոն զօրքով, սակայն նա սպանուեցաւ տեղացիներից: Այնտեղ կան նաեւ ուրիշ մետաղահանքեր եւ նրանցից մէկը՝ այսպէս կոչուած կարմրաղեղ (Minning) որն կոչւում է նոյնպէս Հայկական գոյն եւ նման է ծիրանեգոյնի»(72): Սակայն Ստրաբոնի իմ օրինակս, Ցունարէնէ Անգլիերէնի թարգմանուած Համիլդոնէ եւ Ֆալքոնըրէ, պարզապէս կ'ըսէ. «(հոն) կան ուրիշ հանքեր, եւ նաեւ Սանտիքսի (Sandyx) հանք մը, ինչպէս որ կը կոչուի, որուն կը տրուի Հայկական գոյն անունը, կը նմանի Գալչի (Calche)»(73): Եւ թարգմանիչները լուսանցքի տակ կ'աւելցընեն. «տարակուսելի է թէ այս գոյնը կարմիր էր, կապոյտ կամ ծիրանեգոյն» (անդ): Սանտիքս, ըստ Վեպլըդրրի ընդարձակ բառարանին՝ տեսակ մը կարմիր է, կապարակարմիր:

Կրնայ ըլլալ որ Ստրաբոն՝ Հայկական կարմիրը, որդանը հանքէ արտադրուած կարծած է, փոխանակ միջատէ: Կրնայ ըլլալ որ Ստրաբոն իմացած է Սպերի մէջ կամ մօտերը գտնուող կարմրաղեղի, այսինքն Մինիումի կամ Սանտիքսի (Minium եւ ոչ թէ Minning, քանի որ նման բառ չկայ Լատիներէնի մէջ, ինչպէս որ Ա. Խաչատուրեան կը կարծէ) հանքեր ըլլային, կամ թէ խլաքարի, եւ ատիկա պատճառ եղած է իրեն չփոթելու Հայկական գոյնը, որդանը, հանքային կարմիրի մը հետ:

Խլաքարը մինչեւ հիմա կը գործածուի Հայաստան ի Բուլանըխ, կարմիր ներկելու առեն: «Գրվաղ կարմիրն (թունդ կարմիրը) ունենալու համար մանածը մի քանի ժամ կրաջրի մէջ կ'ընկղմեն, յետոյ եօթ ջուր (եօթն անգամ) լուանալով՝ խլաքարով (բաց կարմիր գոյնով մի քար է) եւ գրվաղ դեղով (կարմիր ներկ) կը ներկեն»(74):

(72) Ս. Խ. Հայաստանի Պետ. Համ. գիտ. տեղեկագիր, 1925, Երեւան, թիւ 1, էջ 52:
(73) The Geography of Strabo, London, 1913, Vol. II, p. 271.
(74) Ազգ. Հանդէս, 1899, էջ 69: